Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-968-30.08.2010-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական սկզբունքները, աղբահանության վճարը, դրույքաչափերը, աղբահանության համար վճարողները, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու համար, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

2. Սույն օրենքը չի կարգավորում վտանգավոր թափոնների հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման իրավական կարգավորումը

Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Թափոնների մասին», «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) աղբահանություն՝ աղբի հավաքում, պահում, փոխադրում և աղբավայրում տեղադրում,

2) աղբ՝ կենցաղային աղբ, արտադրական աղբ, շինարարական աղբ, խոշոր եզրաչափերի աղբ և հատուկ աղբ,

ա) կենցաղային աղբ՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ մարդու կենսագործունեության ծագմամբ առաջացող սպառման թափոններ, բացառությամբ՝ խոշոր եզրաչափերի աղբի,

բ) արտադրական աղբ՝ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտադրության և սպառման թափոններ, որոնք առաջանում են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում,

գ) շինարարական աղբ՝ քաղաքաշինական գործունեության ընթացքում առաջացող թափոններ կամ աղբ, այդ թվում՝ շինարարական վերանորոգման, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացող աղբ,

դ) խոշոր եզրաչափերի աղբ՝ մարդու կենսագործունեության ծագմամբ կամ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող արտադրության և սպառման խոշոր եզրաչափերի թափոններ կամ աղբ,

ե) հատուկ աղբ՝ սույն հոդվածի առաջին մասի ա-ից դ ենթակետերում չնշված կամ իրենց ծագման բնույթով կամ տեսակով տարբերվող թափոններ կամ աղբ,

3) սանիտարական մաքրում՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցներ, այգիներ, պուրակներ, հրապարակներ, բակեր, մայթեր, անցումներ, կամուրջներ, սիզամարգեր, լողափեր և նման այլ տարածքներ) մաքրումը աղբից, հատուկ աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի, հրապարակների, հուշարձանների ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը,

4) օպերատոր՝ համայնքին աղբահանության և/կամ սանիտարական մաքրման ծառայություններ մատուցող կազմակերպություն (կազմակերպություններ) կամ անհատ ձեռնարկատեր (անհատ ձեռնարկատերեր),

5) անշարժ գույք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքը, ինչպես նաև անշարժ գույք չհանդիսացող ոչ հիմնական շինությունները:

Հոդված 4. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակները և սկզբունքները

1. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական նպատակներն են՝

1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը,

2) բնակության համար հարմարավետ և բնապահպանական անվտանգ պայմանների ապահովումը:

2. Աղբահանության և սանիտարական մաքրման հիմնական սկզբունքներն են՝

1) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիությունը և տարածքների մաքրումը աղբից,

2) աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և մշտական իրականացումը սույն օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան,

3) աղբահանության վճարովի լինելը,

4) աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,

5) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը,

6) ոլորտում միջհամայնքային համագործակցության զարգացումը:

Հոդված 5. Աղբահանության վճարը

Աղբահանության վճարը սույն օրենքով նախատեսված վճարողների կողմից շրջակա միջավայրի պահպանությունն ապահովելու նպատակով աղբահանության դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե կամ՝ սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գանձումն օպերատորի ներգրավմամբ իրականացնելու դեպքում, համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ վճարվող պարտադիր վճար է:

Հոդված 6. Աղբահանության համար վճարողները

1. Աղբահանության համար վճարողներ են հանդիսանում համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, ինչպես նաև անշարժ գույք չհանդիսացող ժամանակավոր կացարանների սեփականատեր ֆիզիկական անձինք (ներառյալ անհատ ձեռնարկատերեր), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև առևտրի, հանրային

սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներից դուրս սահմանված կարգով գործունեություն իրականացնող անձինք, այդ թվում՝ բացօթյա առևտուր իրականացնող անձինք, իսկ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

2. Աղբահանության վճարի արտոնություններ կարող է սահմանել համայնքի ավագանին՝ աղբահանությունն օպերատորի կողմից իրականացվելու դեպքում աղբահանության վճար վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով աղբահանության վճարը:

Հոդված 7. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը

Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով), իսկ սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գանձումն օպերատորի կամ այլ կազմակերպության (կազմակերպությունների) ներգրավմամբ իրականացնելու դեպքում՝ համայնքի բյուջեից կամ արտաբյուջետային հաշվից:

Հոդված 8. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնողը

Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կարող են իրականացվել անմիջականորեն համայնքային հիմնարկների կողմից, կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորի կողմից:

ԳԼՈՒԽ 2
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 9. Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպմանը ներկայացվող պահանջները

Աղբահանությունը և սանիտարական մաքրումը մշտապես և պարտադիր իրականացվող աշխատանք է, որն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված սանիտարա-հիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

Հոդված 10. Աղբի հավաքմանը և պահմանը ներկայացվող պահանջները

1. Կենցաղային աղբը , ինչպես նաև մարդու կենսագործունեությամբ առաջացող խոշոր եզրաչափերի աղբը հավաքվում և/կամ պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի կողմից տրամադրված տարողություններում՝ աղբամաններում, կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարա-հիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

2. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում առաջացող աղբի համար համայնքի կամ օպերատորի կողմից տեղադրվում են աղբամաններ կամ կոնտեյներներ՝ սանիտարա-հիգիենիկ կանոններին և նորմերին, ինչպես նաև սանիտարական սխեմային համապատասխան:

3. Արտադրական աղբը և հատուկ աղբը հավաքվում և պահվում է աղբահանության համար վճարողների կողմից ձեռք բերված կամ համայնքի կամ օպերատորի կողմից տրամադրված և դրանց համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության համար համապատասխան վճարողների տարածքներում, եթե այլ բան սահմանված չէ համայնքի ղեկավարի կողմից: Ընդ որում, համայնքի կամ օպերատորի կողմից աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար վճարողների պահանջով կարող են տրամադրվել վարձակալության հիմունքներով:

4. Շինարարական աղբը, ինչպես նաև իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող խոշոր եզրաչափերի աղբը հավաքվում և պահվում է համայնքի կամ օպերատորի կողմից վարձակալության հիմունքներով տրամադրված կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության համար համապատասխան վճարողների տարածքներում կամ համայնքի ղեկավարի թույլտվությամբ՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքում: Ընդ որում, համայնքի կամ օպերատորի կողմից կոնտեյներները աղբահանության համար վճարողների պահանջով կարող են տրամադրվել վարձակալության հիմունքներով:

5. Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների (կոնտեյներների) տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը հաստատում է համայնքի ղեկավարը:

6. Արգելվում է աղբը պահել կամ թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում:

Հոդված 11. Աղբի փոխադրմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները

Աղբի փոխադրման և հեռացման իրականացումը պետք է կազմակերպվի նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Հոդված 12. Սանիտարական մաքրման սխեմային (ծրագրին) ներկայացվող պահանջները

1. Սանիտարական մաքրման սխեման (ծրագիրը) պարունակում է հետևյալ հիմնական տարրերը՝ համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

2. Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

ԳԼՈՒԽ 3
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 13. Աղբահանության վճարի դրույքաչափը

1. Աղբահանության վճար սահմանվում է՝

1) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 30000 դրամ,

2) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 10000 դրամ, իսկ կենցաղային աղբի համար ֆիզիկական անձի (բացառությամբ անհատ ձեռնարկատերի) դեպքում՝ առավելագույնը 5000 դրամ,

3) ըստ հաշվառված անձանց թվաքանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 500 դրամ, ընդ որում, եթե տվյալ հասցեում որևէ անձ հաշվառված չէ, ապա տվյալ բնակելի շինության կամ բնակարանի համար հաշվարկվում է աղբահանության վճար մեկ բնակչի համար սահմանված դրույքաչափով,

4) ըստ անշարժ գույքի մակերեսի՝ 1 քմ բնակելի մակերեսի հաշվով՝ առավելագույնը 50 դրամ, իսկ 1 քմ ոչ բնակելի մակերեսի համար՝ 75 դրամ:

2. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում է համայնքի ավագանու կողմից օրենքով սահմանված կարգով՝ սույն օրենքով սահմանված դրույքաչափի սահմաններում:

3. Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրուքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի չափերը, նպատակային կամ գործառնական նշանակությունը, հարկայնությունը, հեռավորությունը աղբավայրից, վճարողների գործունեության առանձնահատկությունները:

4. Աղբահանության վճար կարող է սահմանվել դրույքաչափերի կիրառման հետևյալ մեթոդաբանությամբ.

1) ըստ զանգվածի՝

ա) արտադրական աղբը՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար,

բ) շինարարական աղբը՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար առանձին,

գ) հատուկ աղբը՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար առանձին, ընդ որում՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած հատուկ աղբի առանձին տեսակների համար՝ առանձին,

2) ըստ ծավալի՝

ա) կենցաղային աղբը՝ ֆիզիկական անձանց համար,

բ) արտադրական աղբը՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար,

գ) խոշոր եզրաչափերի աղբը՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար առանձին,

դ) հատուկ աղբը՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար առանձին, ընդ որում՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած հատուկ աղբի առանձին տեսակների համար՝ առանձին,

3) ըստ հաշվառված անձանց թվաքանակի՝ կենցաղային աղբը,

4) ըստ անշարժ գույքի մակերեսի՝

ա) կենցաղային աղբը՝ ֆիզիկական անձանց համար,

բ) արտադրական աղբը՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար,

գ) հատուկ աղբը՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար առանձին, ընդ որում՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած հատուկ աղբի առանձին տեսակների համար՝ առանձին:

Հոդված 14. Աղբահանության վճարի հաշվարկման կարգը

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է հանդիսանում օրացուցային ամիսը:

2. Անշարժ գույքի սեփականատիրոջ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ ավել վճարածի գերավճարի իրավունքը:

3. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալի կամ անհատույց օգտագործողի՝ աղբահանության վճարի գծով պարտավորությունները փոխանցվում են համապատասխանաբար պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին, եթե այլ բան նախատեսված չէ նոր վարձակալի կամ անհատույց օգտագործողի հետ կնքված գործարքով:

4. Աղբահանության վճար վճարողի պարտավորությունը դադարում է դրամական միջոցների վճարմամբ կամ ֆիզիկական անձ հանդիսացող վճարողի մահվամբ, եթե՝

ա) վճարողի անշարժ գույքն անժառանգ ճանաչվելու հիմքով փոխանցվել է համայնքին ի սեփականություն, կամ

բ) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման մահացածի իրավունքը այլ անձի չի փոխանցվել:

Հոդված 15. Աղբահանության վճարի գերավճարները

1. Աղբահանության վճարի ավել մուծված գումարները հաշվարկվում են որպես կանխավճար կամ, այդ վճարը վճարողի դիմումի հիման վրա, ենթակա են համայնքի կողմից վերադարձման՝ դիմումը տալուն հաջորդող 30 օրվա ընթացքում, անկախ օպերատորի հետ պայմանագրի լուծման հանգամանքից:

2. Աղբահանության վճարը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե այդ վճարը վճարվել է ավելի, քան հաշվարկված գումարն է:

Հոդված 16. Աղբահանության վճարի վճարման կարգը

1. Աղբահանության վճարը պետք է վճարվի կանխիկ կամ անկանխիկ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 20-ը:

2. Աղբահանության վճարի դրույքաչափի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում աղբահանության վճարը հաշվարկողը մինչև հաջորդող ամսվա 10-ը աղբահանության համար վճարողներին իրազեկում է հաշվարկված վճարի չափի մասին:

Հոդված 17. Աղբահանության վճար վճարողներին հաշվառողները, աղբահանության վճարը հաշվարկողները և աղբահանության վճարի գանձումը

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից կարող են վերապահվել օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին):

3 Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմնին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

4. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանում է համայնքի ղեկավարը:

5. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 4

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքները և պարտականությունները

1. Աղբահանության վճար վճարողներն իրավունք ունեն՝

1) ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից կատարվող վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը կատարված հաշվարկների հետ,

2) ծանոթանալ իրենց կողմից կատարվող վճարի չափի և հաշվարկների հետ, ինչպես նաև տեղեկություններ ստանալ իրենց կողմից կատարված վճարումների մասին,

3) օրենքով սահմանված կարգով բողոքարկել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման իրեն վերաբերվող գործողությունները:

2. Աղբահանության վճար վճարողները պարտավոր են սույն օրենքով սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը:

Հոդված 19. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1. Աղբահանության վճարի վճարման ուշացման համար վճարողներից գանձվում է՝ տույժ յուրաքանչյուր ուշացված օրվա համար 0,15 տոկոս դրույքաչափով, բայց ոչ ավել, քան 180 օր:

2. Աղբահանության վճարի գծով չվճարած պարտքը գանձման ենթակա չէ, եթե վճարի հաշվարկման հաշվետու ամսվանից հետո անցել է երեք տարի:

3. Սույն հոդվածով նախատեսված տույժերը հաշվարկում ու գանձում են սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված աղբահանության վճար գանձողները:

4. Օպերատորի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունը, ինչպես նաև աղբահանության և/կամ սանիտարական մաքրման ծառայություններ մատուցելու վերաբերյալ համայնքի և օպերատորի միջև կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը սահմանվում են պայմանագրով:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 20. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո համայնքի ու աղբահանություն և/կամ սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող համապատասխան կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերը գործում են կամ դրանց գործողությունը կարող է երկարացվել, ինչպես նաև համանման պայմանագրեր կարող են կնքվել մինչև սույն օրենքով սահմանված պայմաններին ու պահանջներին համապատասխան օպերատորի հետ կնքված պայմանագրով նախատեսված օպերատորի կողմից պարտավորությունների կատարման ժամկետի սկիզբը:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում համայնքի ավագանին սահմանում է աղբահանության դրույքաչափերը, ընդ որում՝ աղբահանության վճարը հաշվարկվում է աղբահանության դրույքաչափը սահմանելուն հաջորդող ամսվանից և գանձվում է սույն օրենքով սահմանված կարգով:

4. Սույն օրենքի ընդունումը պետության համար չի առաջացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փոխհատուցման պարտավորություն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010թ. սեպտեմբերի 15-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

հ/հ	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Այս բավանդակությամբ ներկայացված օրենքի նախագիծը վերաբերվում է առավելապես աղբահանության վճարների հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորմանը: Նախագիծը չի պարունակում աղբահանության և սանիտարական մաքրման բոլոր բնագավառների հարաբերությունները կարգավորող համապատասխան դրույթներ: Հետևաբար, առաջարկվում է օրենքի նախագիծը վերանվանել «Աղբահանության վճարների կանոնակարգման մասին» վերնագիրը:	Ընդունելի չէ, քանի որ, բացի վճարների հետ կապված հարաբերություններից՝ նախագիծը կարգավորում է նաև այլ հարաբերություններ: Նախագծի 1-ին հոդվածը հստակ սահմանում է օրենքի կարգավորման առարկան:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ.Մարգարյան	«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) բացակայում են տվյալ օրենքով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը, խոսքը հատկապես վերաբերվում է աղբահանության վճարների ողջամիտ չափերի սահմանմանը:	Ընդունելի է, սակայն տվյալ հարցն արդեն իսկ կարգավորված է ոչ այս նախագծով, այլ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5 հոդվածի հինգերորդ մասով:
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ.Մարգարյան	Նախագծի շրջանակներում անհրաժեշտ է տարանջատում մտցնել քաղաքային և գյուղական համայնքներում իրականացվող աղբահանության գործընթացների միջև, մասնավորապես աղբի կուտակման վայրերի, օպերատորի ընտրության և այլն:	Ընդունելի է, սակայն օրենքի նախագծի 13-րդ (նոր համարակալմամբ) հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթն արդեն իսկ դրա հնարավորությունը տալիս է սահմանելու հաշվարկման և չափի առումով տարբեր դրույքաչափեր՝ ելնելով տվյալ համայնքի առանձնահատկություններից և այլ հանգամանքներից:
4.	ՀՀ ԱԺ	Աղբահանության օպերատորի գործունեությունը դարձնել	Ընդունելի չէ, քանի որ դրա

	պատգամավոր Հ.Մարգարյան	լիցենզավորվող գործունեություն:	անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը բացակայում է՝ ելնելով ձեռնարկատիրական գործունեությունը զարգացնելու նպատակից, լիցենզավորվող գործունեության տեսակները նպատակահարմար է հնարավորինս կրճատել:
5.	ՀՀ կառավարություն	Հստակեցման նպատակով առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի «դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը» բառերը փոխարինել «դրույքաչափերը, աղբահանության համար վճարողները» բառերով, իսկ «լիազորությունների իրականացման կարգը» բառերը փոխարինել «լիազորությունները» բառերով: Միաժամանակ, նախագծի 1-ին հոդվածում ավելացնել դրույթ այն մասին, որ տվյալ օրենքը չի կարգավորում վտանգավոր թափոնների հետ կապված հարաբերությունները:	Ընդունվել է:
6.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	Նախատեսել օպերատոր-բաժանորդ (բնակիչ) պայմանագրի պարտադիր կնքում, որում նկարագրված կլինի, թե օպերատորը ինչպես, ինչ հաճախականությամբ է մատուցում աղբահանության ծառայությունը:	Ընդունելի չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը հռչակում է պայմանագրի ազատության սկզբունքը: Ինչ վերաբերում է օպերատորի պարտականություններին, ապա դրանք սահմանված կլինեն սանիտարական մաքրման սխեմայով (որը պարտադիր կլինի օպերատորի համար), ինչպես նաև տվյալ համայնքի և օպերատորի միջև կնքված պայմանագրով: Իսկ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցի հաստատման խնդրին անդրադարձ է կատարված նաև նախագծի 10-րդ հոդվածում:
7.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածում լրացում կատարել՝ հատկանշելով նաև Սահմանադրության, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի մասով:	Ընդունվել է:
8.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն»	Սահմանել «խոշոր եզրաչափերի թափոններ» հասկացությունը:	Ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածը վերախմբագրվել է (տես նաև հաջորդ

	խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան		առաջարկության վերաբերյալ եզրակացությունը):
9.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	Օրենքով սահմանել «կենցաղային աղբը» և աղբի այլ տեսակներ:	Ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածը վերախմբագրվել է, մասնավորապես, սահմանվել են աղբի տեսակները՝ կենցաղային, արտադրական, շինարարական, խոշոր եզրաչափերի և հատուկ: Այդ կապակցությամբ Նախագծից հանվել է տվյալ հոդվածի 2-րդ մասը, միաժամանակ ամբողջությամբ վերախմբագրվել է նախագծի 10-րդ հոդվածը՝ համապատասխանեցնելով նախագծի 3-րդ հոդվածով սահմանված աղբի տեսակներին:
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ, համապատասխան տերմինների առումով խմբագրական փոփոխություն կատարելով Նախագծի 13-րդ հոդվածում. «սանիտարական մաքրում՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցներ, այգիներ, պուրակներ, հրապարակներ, բակեր, մայթեր, անցումներ, կամուրջներ, սիզամարգեր, լողափեր և նման այլ տարածքներ) մաքրումը աղբից, հատուկ աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի, հրապարակների, հուշարձանների ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներում ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը»:	Ընդունվել է. միաժամանակ, նախագծի 13-րդ հոդվածում «սանիտարական մաքրման օբյեկտների» բառերը փոխարինելով «սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների» բառերով:
11.	ՀՀ կառավարություն	Նկատի ունենալով այն, որ աղբ առաջացնում են նաև անշարժ գույք չհանդիսացող ոչ հիմնական շինություններում բնակվող կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք՝ առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ ենթակետում անշարժ գույքի հասկացությունը	Ընդունվել է:

		շարադրել հետևյալ բովանդակությամբ. «անշարժ գույք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքը, ինչպես նաև անշարժ գույք չհանդիսացող ոչ հիմնական շինությունները:»:	
12.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածը վերախմբագրել սահմանելով տվյալ հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերը աղբահանության և սանիտարական մաքրման որպես նպատակներ: Միաժամանակ, տվյալ հոդվածի 6-րդ ենթակետում նախատեսված սկզբունքը, ինչպես նաև նախագծի 12-րդ հոդվածը անհրաժեշտ է հանել, քանի որ դրանք դուրս են տվյալ օրենքի կարգավորման առարկայից:	Ընդունվել է. փոփոխվել են նաև հոդվածների համապատասխան համարակալումները:
13.	ՀՀ կառավարություն	Հստակեցման նպատակով՝ Նախագծի 5-րդ հոդվածի «ապահովելու նպատակով» բառերից հետո լրացնել «աղբահանության դիմաց» բառերը:	Ընդունվել է:
14.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ինքնակառավարման մարմինները» բառերից հետո լրացնել «ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներից դուրս սահմանված կարգով գործունեություն իրականացնող անձինք, այդ թվում՝ բացօթյա առևտուր իրականացնող անձինք:» բառերով, քանի որ, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, վերջիններս ևս համդիսանում են աղբ առաջացնող: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասում հստակեցման նպատակով՝ «համայնքի ավագանին» բառերից հետո լրացնել «աղբահանությունն օպերատորի կողմից իրականացվելու դեպքում» բառերով:	Ընդունվել է:
15.	ՀՀ կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների տրամաբանությամբ, ինչպես նաև համայնքի ավագանու լիազորությունները չսահմանափակելու նպատակով՝ նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասից, ինչպես նաև մյուս հոդվածներից հանել «համայնքի ղեկավարի ներկայացմամբ» բառերը:	Ընդունվել է, համապատասխան փոփոխություն է կատարվել նաև Նախագծի 13-րդ և 14-րդ հոդվածներում (նոր համարակալմամբ, համապատասխանաբար՝ 12-րդ և 13-րդ հոդվածներ):
	ՀՀ կառավարություն	Նկատի ունենալով այն, որ նախագծի 7-րդ հոդվածում արդեն իսկ սահմանված է, թե ինչպես է ֆինանսավորվում աղբահանությունը, չկրկնվելու նպատակով, հանել նախագծի 8-րդ հոդվածի «համայնքի բյուջեի միջոցների հաշվին»	Ընդունվել է:

		բառերը	
16.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Աղբահանությունը և սանիտարական մաքրումը մշտապես և պարտադիր իրականացվող աշխատանք է, որն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված սանիտարա-հիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:»	Ընդունվել է:
17.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածի չորրորդ մասը առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Արգելվում է աղբը պահել կամ թափել դրա համար չսահմանված կամ չնախատեսված վայրերում»:	Ընդունվել է:
18.	ՀՀ կառավարություն	Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ծավալների հաշվարկը» բառերը փոխարինել «ծավալների մոտավոր հաշվարկը» բառերով, իսկ «մեքենա-մեխանիզմների քանակը» բառերը՝ «մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները» բառերով:	Ընդունվել է:
19.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	13-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ ձևով. «Սանիտարական մաքրման սխեմայով սահմանված պահանջները պարտադիր են օպերատորի համար, երբ համաձայն սույն օրենքի 8-րդ հոդվածի՝ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են նրա կողմից»:	Ընդունելի է, սակայն նշված դրույթը չկրկնվելու նպատակով հանվել է նախագծից, քանի որ նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ կետն արդեն իսկ սահմանում է դրա պարտադիր լինելը:
20.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր են և մշտապես իրականացվում են նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան: 8-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ սանիտարական մաքրման սխեմայով սահմանված պահանջները պարտադիր չեն օպերատորի համար: Առաջարկվում է վերացնել այս հակասությունը:	Ընդունելի է, սակայն նշված դրույթը չկրկնվելու նպատակով հանվել է նախագծից, քանի որ նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ կետն արդեն իսկ սահմանում է դրա պարտադիր լինելը (ենթադրելով, որ առաջարկությունը վերաբերում է ոչ թե նախագծի 8-րդ հոդվածին, այլ՝ 13-րդ հոդվածին):
	ՀՀ կառավարություն	Հստակեցման նպատակով նախագծի 3-րդ գլխի անվանման «վճար կատարելու հիմքը, դրա դրույքաչափը» բառերը փոխարինել «վճարի դրույքաչափը» բառերով:	Ընդունվել է:
21.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր	14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը վերաշարադրել այնպես, որ աղբահանության վճարը հաշվարկվի և հաստատվի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, և այդ վճարը անշարժ գույքում հաշվառված	Ընդունելի չէ. հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործոնը տեղին չէ, քանի որ աղբահանության վճարը, համաձայն քննարկվող նախագծի 5-րդ

	պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	յուրաքանչյուր բնակչի համար չգերազանցի 300 դրամը:	հոդվածի՝ համարվում է պարտադիր վճար: Դրույքաչափի մասով. նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են իհարկե դրույքաչափերի առավելագույն սահմանները, այլ ոչ թե դրանց կոնկրետ չափերը: Խնդիրն անհրաժեշտ է քննարկել նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթի հետ մեկ ամբողջականությամբ, որը հնարավորություն է տալիս սահմանել տարբեր դրույքաչափեր. նախ՝ աղբի տարբեր տեսակների և այլ առանձնահատկություններից ելնելով: Միաժամանակ, հստակեցման նպատակով քննարկվող հոդվածի 2-րդ մասի «վճարի հաշվարկման» բառը փոխարինվել է «վճար սահմանելու համար» բառերով:
22.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Բիշարյան	Հոդված 14-ի 1-ին կետում «մինչև 1000 դրամ» բառը փոխարինել «մինչև 500 դրամ» բառերով:	Ընդունվել է (նոր համարակալմամբ 13-րդ հոդված):
23.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Նախագծի 14 հադվածով սահմանված աղբահանության առավելագույն վճարի (30 հազ.դրամ, 10 հազ. դրամ, 1000 դրամ և 100 դրամ) չափերը հիմնավորված չեն և նախատեսված են կիրառել որպես զսպող չափ: Սակայն, բացակայում են հիմք հանդիսացող չափորոշիչները, օրինակ՝ Երևան քաղաքում ավագանին առանց որևէ հիմնավորման կարող է ընդունել մեկ բնակչի հաշվով 1000 դրամ ամսական դրույքաչափը: Առ այդ, հոդվածն անհրաժեշտ է ամբողջությամբ վերախմբագրել՝ սահմանելով՝ • օպերատորի ողջամիտ շահույթ հասկացությունը և չափը, • օպերատորի կողմից վարկային միջոցների օգտագործման վերահսկողության նորմերը, • համայնքի բյուջեից օպերատորին տրվող սուբսիդիաների նպատակային օգտագործման չափորոշիչներն ու կարգը, • համայնքի տարածքում կուտակված աղբի օգտահանումից օպերատորի ստացած եկամուտներից համայնքի բյուջե կատարվող մասհանումների	Ընդունվել է մասամբ, հոդվածն (նոր համարակալմամբ 13-րդ հոդված) ամբողջությամբ վերախմբագրվել է. դրույքաչափի մասով՝ 1000 դրամը սահմանելով 500 դրամ, իսկ 100 դրամը՝ տարբերակված մոտեցմամբ սահմանելով 1քմ. բնակելի մակերեսի համար՝ 50 դրամ, իսկ ոչ բնակելիի համար՝ 75 դրամ: Բացի այդ, նախագծի տվյալ հոդվածով նախատեսված սկզբունքները հանվել են.

		չափերը՝ ներառյալ աղբահանման և սանմաքրման չափերի նվազեցման և մասհանումների միջև կապը, աղբահանության բարելավման որակական չափանիշները: Պետք է նաև նկատի ունենալ, որ աշխարհի շատ քաղաքներում աղբահանության օպերատորների գործունեությունից ստացված եկամուտները այդ քաղաքների բյուջեների համալրման լուրջ աղբյուր են: Հատկանշական է նաև, որ օրինակ եթե Երևան համայնքում ավագանին ընդունի աղբահանության համար 1 բնակչի հաշվով ամսեկան 1000 դրամ դրույքաչափը, ապա կստացվի, որ շուրջ 5 անգամ կբարձրանա գործող դրույքաչափը առանց հիմնավորման, ինչը սոցիալ-տնտեսական վիճակի տեսանկյունից ընդունելի չէ:	
24.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	14-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ ձևով. «Աղբի կամ հատուկ աղբի տարբեր տեսակների համար վճարողների տարբեր խմբերի համար սահմանվում են տարբեր դրույքաչափեր՝ օրենքին կից հավելվածով»:	Ընդունվել է մասամբ. (նոր համարակալմամբ 13-րդ հոդված) տվյալ նորմը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «3. Աղբի տարբեր տեսակներիհամար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրուքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի չափերը, նպատակային կամ գործառնական նշանակությունը, հարկայնությունը, հեռավորությունը աղբավայրից, վճարողների գործունեության առանձնահատկությունները:» :
25.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	1. Անհրաժեշտ է օրենսդրական նախաձեռնությունը համալրել. ա. «ՀՀ բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման հայեցակարգը»-ով, բ. օրենքի նախագծի 14-րդ հոդվածով սահմանված աղբահանության առավելագույն վճարի դրույքաչափերի կիրառման ձևի ընտրության մեթոդաբանությամբ, գ. աղբահանության և սանիտարական մաքրման բնագավառում մասնավորապես՝ կենցաղային աղբի սեզոնային գոյացման ելքի նորմաներով ըստ բնակելի ֆոնդի	ա. Ընդունելի չէ, քանի որ դրա նվազագույն սկզբունքային լուծումները նախատեսված են նախագծով (4-րդ հոդված և 2-րդ գլուխ), իսկ ինչ վերաբերում է կոնկրետ նման հայեցակարգի ամրագրմանը օրենքով, ապա այն օրենքի կարգավորման առարկա դարձնելը նպատակահարմար չէ: բ. Ընդունվել է, տվյալ հոդվածը (նոր համարակալմամբ՝ 13-րդ հոդված) լրացվել է նոր մասով.

		բարեկարգվածության աստիճանի, աղբից օգտահանման ենթակա էլեմենտների բաղադրաչափերի տեսակարար կշռի մասին տեղեկություններով:	գ. Ընդունելի չէ, քանի որ աղբի տեղադրման, վերամշակման՝ օգտահանման հարաբերությունները դուրս են տվյալ օրենքի կարգավորման առարկայից: Միաժամանակ, այդ առումով կատարվել է համապատասխան ճշգրտում՝ 4-րդ հոդվածի 6-րդ ենթակետում նախատեսված սկզբունքը, ինչպես նաև նախագծի 12-րդ հոդվածը հանվել է, քանի որ դրանք ևս դուրս են տվյալ օրենքի կարգավորման առարկայից:
26.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ.Մարգարյան	Անհրաժեշտ է տարանջատել հասարակական նշանակության և բնակելի տարածքների նկատմամբ հաշվարկվող աղբահանության վճարները, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից գանձվող վճարների չափերը:	Ընդունվել է, տվյալ հոդվածը (նոր համարակալմամբ՝ 13-րդ հոդված) լրացվել է նոր՝ 4-րդ մասով.
27.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Օրենքի նախագծի 15-րդ հոդվածով նախատեսված է աղբահանության վճարի հաշվարկ կատարել միայն բազմաբնակարան շենքի, ոչ բազմաբնակարան շենքի և դրանց չվերաբերվող վճարողների համար: Նախագիծը չի պարունակում պարտադիր նորմ այն մասին, որ ՏԻՄ-ը աղբահանության վճարը սահմանելիս ցուցաբերեն տարբերակված մոտեցում աղբամուղ ունեցող և չունեցող (որոնց աղբահանությունը կատարվում է կոնտեյներային հարթակներում տեղադրված աղբամանների միջոցով) շենքերի բնակիչների դեպքում: Իհարկե, մեր կարծիքով, չի կարող աղբամուղ ունեցող շենքի բնակչից գանձվող վճարը հավասար լինել այն բնակչի կողմից կատարվող վճարին, ով ստիպված է աղբը մի քանի հարյուր մետր տանել, կոնտեյներային հարթակում դրված աղբամանը լցնելու համար:	Ընդունելի է, սակայն, հարցը կարգավորված է նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, որը լրացվել է նաև նշված հանգամանքը հաշվի առնելով: Տվյալ դրույթը հնարավորություն է տալիս դրույքաչափերը սահմանելիս կիրառել տարբերակված մոտեցում (տես՝ նաև եզրակացության նախորդ կետը):
28.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Օրենքի նախագծում բացակայում են օրենքի ամենակարևոր մաս կազմող պայմանագրային հարաբերությունները սահմանող համապատասխան հոդվածներ: Այսինքն, սահմանված չեն նաև աղբահանության մասնակից կողմերը, նրանց իրավունքները և պարտականությունները:	Ընդունելի չէ, քանի որ նախագծի ամբողջ գաղափարն այն է, որ աղբահանության վճարը դա պարտադիր վճար է, այլ ոչ թե պայմանագրային հիմունքներով առաջացող պարտավորություն (նախագծի 5-րդ հոդված):
29.	ՀՀ ԱԺ պատգամավորներ	Օրենքի նախագծում բացակայում է համայնքի վարչական տարածքում գտնվող, սակայն համայնքային	Ընդունելի չէ, քանի որ նախագծի ամբողջ գաղափարն այն է, որ աղբահանության

	Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	սեփականություն չհանդիսացող տարածքների սանիտարական մաքրման հետ կապված, դրանց սեփականատերերի կամ օգտագործողների կանոնակարգման վերաբերյալ համապատասխան դրույթները:	վճարը դա պարտադիր վճար է, այլ ոչ թե պայմանագրային հիմունքներով առաջացող պարտավորություն (նախագծի 5-րդ հոդված):
30.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	15-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերն ամբողջությամբ հանել:	Ընդունվել է մասամբ, 15-րդ հոդվածի (նոր համարակալմամբ՝ 14-րդ հոդված) 2-րդ մասը հանվել է: Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դրույթների ամրագրումն պայմանավորված է ի վերջո պարտավորության կատարման անհրաժեշտությամբ (օրինակ՝ գույքահարկի գանձման նման սկզբունքի ամրագրումն համապատասխան օրենքով): Միաժամանակ, 4-րդ մասը հստակեցվել է, մասնավորապես՝«նոր վարձակալին կամ անհատույց օգտագործողին չեն փոխանցվում, եթե այլ բան սահմանված է նոր կողմի» բառերը փոխարինվել են «փոխանցվում են համապատասխանաբար պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմնին, եթե այլ բան նախատեսված չէ նոր վարձակալի կամ անհատույց օգտագործողի» բառերով:
31.	ՀՀ կառավարություն	Խմբագրականը հստակեցնելու նպատակով՝ նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ մասի «դադարում է կատարմամբ՝» բառերը փոխարինել «դադարում է» բառերով, իսկ «, ինչպես նաև» բառերը՝ «կամ» բառով:	Ընդունվել է (նոր համարակալմամբ՝ 14-րդ հոդվածի 4-րդ մաս):
32.	ՀՀ կառավարություն	Հստակեցման նպատակով նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի «վճարվում է» բառերը փոխարինել «պետք է վճարվի» բառերով, իսկ 2-րդ մասի «Աղբահանության վճարը» բառերը փոխարինել «Աղբահանության վճարի դրույքաչափի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում աղբահանության վճարը» բառերով՝ հանելով «, հաշվանցելով կանխավճարը» բառերը:	Ընդունվել է (նոր համարակալմամբ՝ 16-րդ հոդված):
33.	ՀՀ կառավարություն	Նկատի ունենալով այն, որ Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, վճարը հաշվարկելու և գանձելու	Ընդունվել է (նոր համարակալմամբ՝ 17-րդ հոդված), մասնավորապես՝ տվյալ հոդվածի 1-ին մասից հանվել է «, իսկ

		գործառույթը այլ կազմակերպությանը վերապահելու հնարավորությունը՝ անհրաժեշտ է տվյալ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը վերախմբագրել, քանի որ տվյալ գործառույթում նախատեսվող համատիրությունները (բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններից ենթադրվում է, որ վերջիններս հիմնականում կլինեն) ևս հանդիսանում են կազմակերպություններ:	բազմաբնակարան շենքերի դեպքում՝ դրանց կառավարման մարմինները (առկայության դեպքում)» բառերը, իսկ 3-րդ մասում «Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները և/կամ օպերատորը աղբահանության վճար վճարողների հաշվառում, աղբահանության վճարի հաշվարկում, ինչպես նաև այդ վճարի գանձում իրականացնելու դեպքում» բառերը փոխարինվել են «Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացնելու դեպքում՝ օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը»:
34.	ՀՀ կառավարություն	Նախագծի 19-րդ և 20-րդ հոդվածները խմբագրել մեկ հոդվածով՝ հանելով 19-րդ հոդվածի 4-րդ կետը և 20-րդ հոդվածի 2-րդ կետը:	Ընդունվել է (նոր համարակալմամբ՝ 18-րդ հոդված):
35.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Օրենքի նախագծում հեղինակները բավարարվել են միայն աղբահանության վճարի շուրջ ծագող իրավունքների և պատասխանատվության սահմանմամբ: Նախագծի 21-րդ հոդվածով սահմանվել է, որ օպերատորի կողմից պարտավորությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունը և պայմանագրի վաղաժամկետ լուծարման հիմքերը սահմանվում են պայմանագրով: Հստակեցման անհրաժեշտություն կա, թե ինչ պայմանագրի մասին է խոսքը, ում միջև է կնքվել այն և ինչն է պայմանագրի առարկան:	Ընդունվել է, նախագծի 21-րդ հոդվածի 4-րդ մասում «ինչպես նաև պայմանագրի» բառերը փոխարինվել են «ինչպես նաև աղբահանության և/կամ սանիտարական մաքրման ծառայություններ մատուցելու վերաբերյալ համայնքի և օպերատորի միջև կնքված պայմանագրի» բառերով:
36.	ՀՀ կառավարություն	Տեխնիկական վրիպակը վերացնելու նպատակով նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «վճարողներին» բառը:	Ընդունվել է:
37.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից	21-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 21. Օպերատորի պատասխանատվությունը աղբահանության աշխատանքները ժամանակին և պատշաճ չկատարելու համար Օպերատորի կողմից աղբահանությունը ժամանակին և սահմանված կարգով չիրականացնելու դեպքում աղբահանության վճար վճարողները ազատվում են	Ընդունելի չէ, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածով արդեն իսկ սահմանված է համապատասխան պատասխանատվություն աղբահանության աշխատանքները ժամանակին

	Ս.Սաֆարյան	տվյալ ամսվա աղբահանության վճարը վճարելուց»:	չկազմակերպելու համար:
38.	ՀՀ կառավարություն	Նախագծի 22-րդ հոդվածի 2-րդ մասի «համայնքն աղբահանության և/կամ սանիտարական մաքրման առկա» բառերը փոխարինել «համայնքի ու աղբահանություն և/կամ սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող համապատասխան կազմակերպությունների միջև կնքված» բառերով, իսկ «օպերատորի հետ պայմանագիր կնքելը» բառերը փոխարինել «օպերատորի հետ կնքված պայմանագրով նախատեսված օպերատորի կողմից պարտավորությունների կատարման ժամկետի սկիզբը»:	Ընդունվել է (նոր համարակալմամբ՝ 20-րդ հոդված):
39.	ՀՀ կառավարություն	Նախագծի 22-րդ հոդվածը 2-րդ մասից հետո լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում համայնքի ավագանին սահմանում է աղբահանության դրույքաչափերը, ընդ որում՝ աղբահանության վճարը հաշվարկվում է աղբահանության դրույքաչափը սահմանելուն հաջորդող ամսվանից և գանձվում է սույն օրենքով սահմանված կարգով:» :	Ընդունվել է:
40.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	22-րդ հոդվածի 1-ին մասում «օրվանից» բառի փոխարեն գրել «օրը» (հարակից մյուս օրենքներում ևս):	Ընդունվել է:
41.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Վ.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Ա.Շահբազյան, Ա.Նռանյան	Օրենքի նախագիծը կարիք ունի նոր համալրումների, որոնք կկանոնակարգեն աղբ հավաքելուց մինչև աղբավայրում այն տեղադրելը (կամ վերջնական վերամշակումը առկա հարաբերությունները):	Ընդունելի չէ, քանի որ աղբի տեղադրման, վերամշակման՝ օգտահանման հարաբերությունները դուրս են տվյալ օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից:
42.	ՀՀ կառավարություն, ՀՀ ԱԺ պատգամավոր Ա.Հովհաննիսյան	«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է:

		բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերում «աղբահանության պարտադիր վճար» բառերը փոխարինել «աղբահանության վճար» բառերով, քանի որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածով արդեն իսկ սահմանվում է այդ վճարի պարտադիր լինելու հանգամանքը:	
43.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում պատժամիջոց նախատեսել նաև օպերատորների կողմից պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:	Ընդունելի է, սակայն հարցն արդեն իսկ կարգավորված է, մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1-րդ հոդվածով արդեն իսկ սահմանված է համապատասխան պատասխանատվություն աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելու համար:
44.	ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության բոլոր պատգամավորների անունից Ս.Սաֆարյան	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածը հանել:	Ընդունելի չէ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ հակառակ դեպքում հակասություն կառաջանա քննարկվող նախագծի 5-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի (որում նախատեսվում է փոփոխությունը) միջև: